№ 107 ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 20 **1898** ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 20 № 107

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅ 1898 ԹԻՒ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«Մշակի» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ., մի ամսվանը 1 ռուբլի։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը (Բազարնայա և Բարօնսկայա փողոցն. անկիւն)։ Ուրիշ քաղաքներից պէտք է դիմել այս հասցէով. ТИФЛИСЪ, редакція «Мшакъ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «Mschak».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գործողների պակասութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի նոր գիրք Կովկասի մասին. Պանդուխտ աշխատաւորները. Երդուեալների դատարանը Աստրախանի Նահանգում. Նամակ Հին-Նախիջևանից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմ. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Վիէննայի Մխիթարեանների տպագրական գործունէութիւնը։

ԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՊԱԿԱՍՈՒԹԻՒՆ

Երկու երեք տարի առաջ մենք ողջունեցինք Անդրկովկասի մէջ քաղաքային ինքնավարութիւն մտցնելը իբրև մի լայն ասպարէզ, ուր մեր գաւառական ինտելիգենցիան կարող կը լինի ցոյց տալ իր եռանդն ու ընդունակութիւնը։ Հրաշքներ մենք չէինք սպասում, բայց կարծում էինք, որ քաղաքային ինքնավարութեան սահմաններում կարելի է մեծ ծառայութիւններ մատուցանել մեր գաւառական քաղաքներին, որոնք այնքան մոռացված են, յետ մնացած և տառապում են իրանց անօգնական դրութիւնից։ Այդ պատճառով մենք հրաւէր էինք կարդում ինտելիգենցիային, բոլոր այն մարդկանց, որոնք ազնուութեամբ գործելու կարողութիւն են զգում իրանց մէջ, սերտ կապերով կապվել քաղաքային նոր և համակրելի հիմնարկութիւնների հետ, աշխատել, տեղական ցաւերի դարման գտնել։

Այժմ, երբ երկու երեք տարի է անցել ինքնավարութիւնը մտցնելու ժամանակից, մենք, որ սկզբից ի վեր ամենայն ուշադրութեամբ հետևել ենք քաղաքային ինքնավարութեան նորահաստատ օրգանների գործունէութեան, կարող ենք ասել, որ մեր ակնկալութիւնները գոնէ առ այժմ չարդարացան։ Կարծես նոր օրէնքը մեր պատրաստականութեան մի փորձաքարն էր. կարծես հարկաւոր էր բաց անել գործունէութեան ասպարէզ հէնց նրա համար, որ աւելի պարզ ցոյց տրվի, թէ մենք մարդիկ չունենք։ Գաւառական ազգաբնակութեան մէջ երևան չեկաւ փոքր ի շատէ աշխատող, գործունեայ տարր. ոչ հայ, ոչ վրացի և ոչ թուրք ազգութիւնները չը տուեցին ինտելիգենտ, անձնուէր գործիչներ։ Եւ այդ պատճառով շատ տեղերում, ուր ինքնավարութիւնը մտցնվում էր առաջին անգամ, հասատավեց նոյն հին, աղայական կարգը. մի քանի տեղերում ինքնավարութիւնը այնքան անկերպարան, խեղճ դրութեան մէջ է, որ չէ կարողանում քաղաքագլուխ, ուպրավայի անդամներ գտնել. և ամեն տեղ առհասարակ զգացվում է ինտելիգենտ ոյժերի պակասութիւն։ Դրանք այնքան քիչ են, այնքան աննշան ու խեղդված են, որ ոչ մի տեղ չը կարողացան գործել անկախ, պատրաստել նոր հոսանքներ ընտրողների մէջ և այդպիսով մտնել ձայնաւորների կարգը։ Կարելի է առանց սխալվելու ասել, որ գաւառացի ինտելիգենտը համարեա ամենուրեք դումաներից դուրս մնաց և ինքնավարութիւնը անցաւ տգէտ ու խաւար տարրերի ձեռքը։

Այս ցաւալի երևոյթն ենք մենք այսօր մատնացոյց անում։ Մի երևոյթ, որ ցոյց է տալիս թէ մեր գաւառները կուլտուրական առաջադիմութեան ասպարէզում ներկայացնում են անջրդի, խոպան դաշտեր։ Դեռ ութսունական թուականների սկզբում «Մշակը» ջերմ հրաւէրներ էր կարդում ինտելիգենցիային գնալ գաւառները, մտնել ժողովրդի մէջ, գործել նրա համար։ Մօտ քսան տարի անցնելուց յետոյ մենք տեսնում ենք, որ գաւառները դեռ շարունակում են սպասել գործող մարդկանց։ Միւս կողմից մենք պարտք ենք համարում մատնացոյց անել և ինտելիգենցիայի անկարողութեան վրա։ Բաւական չէր գնալ գաւառները, բաւական չէր առհասարակ մոտենալ ժողովրդին թէ գիւղերում և թէ քաղաքներում։ պէտք էր ցոյց տալ նաև գործունէութիւն, պէտք էր հող գրաւել, առաջաւոր մարդկանց անհրաժեշտութիւնը շօշափելի, անուրանալի դարձնել։ Այդ չաջողվեց ինտելիգենցիային. նա կորաւ ազգաբնակութեան խաւերի մէջ, չը կարողանալով հետք թողնել ոգիտութեան աշխարհում։ Ի հարկէ, այդ իրողութեան պատճառներից մէկն էլ ինտելիգենտ ոյժերի աննշան քանակութիւնն էր. կաթիլները հեշտութեամբ են կորչում գետերի մէջ։ Բայց ահա մի փաստ, որ ցոյց է տալիս թէ կայ աւելի մեծ պատճառ։ Անցեալում Բագուի դուման քննում էր մի առաջարկութիւն, որ ներկայացրել էր տեղացի թուրքերից մէկը։ Դումայի ինտելիգենտ ձայնաւորները սաստիկ հակառակ էին այդ առաջարկութեան, բայց քուէարկութեան ժամանակ նա անցաւ ձայների բազմութեամբ։ Անցկացնողներն էին 15 թուրք ձայնաւորներ, որոնք նոյն իսկ ռուսերէն չեն հասկանում։ Նրանց տարած յաղթութիւնը ապշեցրեց ամենքին. բաւական է կարդալ այդ նիստի նկարագրութիւնը, որ տպված է տեղական ռուս լրագրում, և դուք կը տեսնէք թէ որքան ողորմելի է մի քաղաք, որ հարիւրաւոր ինտելիգենտներ ունի, բայց գտնվում է ամբոխի ձնշման տակ։ Եթէ դումայի ինտելիգենտ ձայնաւորները պարտաճանաչ լինէին, եթէ մեր յիշած նիստին ներկայ չը լինէին ընդամենը միայն 28 ձայնաւոր, անկասկած տեղի չէր ունենայ մի այնպիսի վճիռ, որ զարմանք և ապշութիւն պատճառեց ներկայ եղող ինտելիգենտներին։

Եւ այսպէս, բաւական չէ որ ժողովրդի մէջ առհասարակ քիչ է ինտելիգենտների թիւը, եղածներն էլ այնքան թոյլ, անպարտաճանաչ են, այնքան աւելորդ բան են համարում բարեխղճութիւնը, որ ոչինչ չեն կարողանում անել։ Փոքր թիւը դեռ այնքան մեծ ցաւ չէ. բայց երբ նրա հետ միանում է կատարեալ դատարկութիւնը, մնանկութիւնը, այն ժամանակ ստացվում է մի ողբալի պատկեր, մեր խեղճութեան ամբողջ պատկերը...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՆՈՐ ԳԻՐՔ ԿՈՎԿԱՍԻ ՄԱՍԻՆ

Գերմանական «Preussische Jahrbücher» ամսագրի մէջ անցեալ տարի տպվեցին մի շարք յօդուածներ, որոնց մէջ հեղինակ դոկտոր Բօրբախն նկարագրում էր Տուրանում և Հայաստանում կատարած իր ճանապարհորդութեան տպաւորութիւնները։ Այժմ այդ յօդուածները ուղղված և լրացրված լոյս են տեսել առանձին գրքով։ Առաջաբանի մէջ հեղինակն ասում է. «Իմ գլխաւոր նպատակը եղել է նկարագրել Ռուսաստանի այժմեան վիճակը արևելեան խալամի երկիրների վերաբերմամբ. ապա ես կը ցանկայի մի քանի ցուցմունքներ տալ հայ ազգի խելացի և արդար գնահատութեան համար։ Ես գրել եմ միանգամայն անաչառ և անկեղծ, ցանկանալով, որ ընթերցողը կարողանայ հետևել ինձ իմ գնացած ճանապարհով Պօնտոսից և Աբարատից սկսած մինչև Եակսարտը և Ֆերգանեան սարերը և ինքն իր սեփական դատողութիւնը կազմի»։

Հետաքրքրական է հեղինակի կարծիքը վրաց և հայոց ազգերի ծագման մասին։ «Մինչև այժմ, ասում է նա, հաստատապէս յայտնի չէ վրացիների ազգագրական ծագումը. նրանք իրանց երկիրը կոչում են «Քարթլի»։ Ամենից հաւանականն այն է, որ վրացիները մնացորդ են «ալարոդեան» ցեղի, որին պատկանում էին նաև այն երկրի նախկին բնակիչները, որ այժմ բնակեցրված է հայ արիական ցեղով։ Այդ ենթադրութիւնը հաւանական կը թւի, եթէ գիտնականօրէն հաստատվի Վանի լճի մօտ գտնված արձանագրութիւնների ալարօդեան ծագումը և նրանց ազգակցութիւնը վրաց լեզուի հետ։ Նորագոյն հետազօտութիւնները ցոյց են տալիս, որ բոլոր կենդանի լեզուների մէջ վրաց լեզուն ծագումով գրեթէ ամենահինն է և վրացիները պէտք է համարվեն ամենախորին հնութեան շառաւիղ, գործի տեխնիկական մասը կատարված է Վիէննայի զինուորական-աշխարհագրական ինստիտուտում։

«Մխիթարեան-հայրերը՝ իբրև հայ, մի բնածին սէր են ունեցած ի վաղուց դէպի օտար լեզուները», ասում է իրաւամբ հ. Գալէմքեարեան։ Եւ իրօք, Վիէննայի Մխիթարեան տպարանի գլխաւոր արժանաւորութիւններից մէկն էլ՝ հէնց սկզբից, եղել է նրա բազմալեզու լինելը և առանձնապէս արևելեան զանազան լեզուների տառերի հարուստ հաւաքածու ունենալը։ Բացի հայերէնից, որի բազմակողմանի ճոխութիւնը յայտնի է արդէն, Մխիթարեան տպարանը տպում է սերբերէն, ռուսերէն և կիրիլեան (սլաւ եկեղեցական) տառերով, նոյնպէս և եբրայեցերէն, սանսկրիտերէն, ասորերէն, արաբերէն (և նրա տառերը գործածող պարսկերէն ու թիւրքերէն) և վերջապէս չինարէն։ Աւելացնենք սրա վրա յունարէնը և եւրոպական բոլոր լեզուները։

Վերև յիշատակեցինք 25 լեզուանոց և ապա 50 լեզուանոց «Որ օրհնես զայնոսիկը». միաբանութիւնը հրատարակել է նաև 243 էջով մի ստուար հատոր, որ պարունակում է 130 ոտանաւոր, գրված՝ Աւստրօ-Ունգարիայում բազմաթիւ ցեղերի լեզուներով և այս լեզուների բոլոր գաւառաբարբառներով։ Այս հետաքրքրական հրատարակութիւնը, որ կրում է «Kaiser-Album«

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԻԷՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐԻ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

II

Նաև ծանր ճգնաժամ է ունեցել միաբանութիւնը 1848-ին, Վիէննայի յեղափոխութեան ժամանակ, երբ ապստամբված ամբոխը կատաղի յարձակում էր գործում վանքի և մանաւանդ տպարանի վրա, որ մեծ թւով նախանձոտ մրրցակիցներ ունէր օտար տպարանատէրերի մէջ։ Բայց խնդիրը վերջանում է միայն պատուհանների քարկոծվելով և այլ աննշան վնասներով, որովհետև կառավարութիւնն անմիջապէս զօրք է ուղարկում Մխիթարեանների ստացուածքը պաշտպանելու։ Ժողովրդի զրգռումը դադարեցնելու համար միաբանութիւնն էլ իր կողմից մի թռուցիկ յայտարարութիւն է ուղղում «Վիէննայի քաղաքացիներին և բնակիչներին» (An die Bürger und Bewohner Wiens), որտեղ բացատրում է Մխիթարեան տպարանի հաստատութեան բազմարդիւն նպատակը, առանձնապէս շեշտելով այն կէտի վրա, որ իրանք, Մխիթարեանները, հանդիսանում են գերմանական կրթութեան և գերմանական ազդեցութեան տարածողներ Արևելքում։ Այս յայտարարութիւնից յետոյ և կառավարչական միջոցների չնորհիւ յարձակվողները էլ չեն մօտենում և հանգիստ են թողնում նրանց։

1849-ին աւստրիական կառավարութիւնը Մխիթարեան տպարանում տպել է տալիս 6 և 10 քրայցէրանոց թղթադրամ, ապացոյց այնպիսի մեծ վստահութեան, որին Վիէննայի ոչ մի այլ մասնաւոր տպարան արժանի չէ համարված։ Ունգարական ապստամբութեան ժամանակ էլ Կօշուտ՝ ունգարական նոր թղթադրամի կաղապարները փորագրելու համար ի մէջ այլոց Բուդապեշտ է հրաւիրում Մխիթարեան միաբաններից մէկին։ Ուշադրութեան արժանի է նաև այն պարագան, որ Աւստրիայի կայսրը՝ միաբանութեան նիւթապէս օգնելու համար, արտօնագիր է տալիս 1824 թւի յունվարի 12-ին, որով լատիներէն պատարագամատոյց և լատիներէն ժամագիրք տպելու իրաւունքը ամբողջ 30 տարի թողնում է բացարձակապէս և միմիայն «Հայոց Մխիթարեան միաբանութեան։» Միաբանութիւնը իր գործունէութիւնը չէ սահմանափակում միայն հայերէն գրքերի հրատարակութեամբ կամ հայ գրականութիւնը ճոխացնելով, թէև այդ է եղած իր գլխաւոր զբաղմունքը և նպատակը. նա տպում է իր ծախսով նաև եւրոպական լեզուներով հրատարակութիւններ՝ մասամբ Մխիթարեանների և մասամբ օտար հեղինակների աշխատութիւններից, որոնք մեծ սպառում են գտնում Աւստրիայում և Գերմանիայում։

Աբբահայր Արիստակէս արքեպիսկոպոս Ազարեան 1828-ին հիմնում է «Կաթոլիկական գրքերի տարածման ընկերութիւնը», որին մասնակցում են նաև կայսերական տան անդամները. այս ընկերութիւնը տևում է 25 տարի (1830—1849 և 1862—1866) և տպում ու տարածում է մօտ 600,000 հատոր գիրք, գերմաներէն լեզուով։ Այս աբբահայրը առհասարակ թէ տպարանի և թէ միաբանութեան առաջադիմութեան շատ մեծ զարկ է տուել։ Բացի վերոյշեալ ընկերութիւնից՝ միաբանութիւնը յատկապէս հայերէն գրքերի տպագրութեան տարածման այժ տալու համար 1843-ին հաստատել է նաև. 1) «Արամեան ընկերութիւն», որ տևում է մինչև այժմ և իր ծախսով տպել է մինչև հիմա 15 գիրք, «ուսումնական» և «քանասիրական» բովանդակութեամբ, և 2) «Անարատ յղութեան եղբայրութիւն», որի հայթայթած միջոցներով էլ մինչև հիմա տպվել է 19 գիրք, կրօնական բովանդակութեամբ։ Բացի զուտ տպագրական գործերից, ցուցահանդէսի մէջ ի տես են դրված նաև Մխիթարեանների շինած հայերէն երկրագունդները (globus), որոնք թէև մօտ կէս դար առաջ շինված, բայց իրանց գծագրութեան մաքրութիւնը մինչև հիմա էլ զարմանք է ազդում տեսնողին։ Այս երկրագունդներից ամենամեծը, որ 2 ոտք տրամագիծ ունի, այժմեան աբբահայր Այտնեանն է գծել և պատրաստել իր երիտասարդութեան ժամանակ՝ (1845—1848).

որովհետև սումէրիական կոթողները մի քանի հազար տարիներով հին են սեմիտական դարեշրջանից և եգիպտական ամենահին գրութիւններից։ Ալարոդեան թագաւորութեան անունը իմացվել է ասորական սեպաձև բևեռագրերից. նա կոչվում էր Ուրարտու և նրա մայրաքաղաքը, Տուսպան, գտնվում էր Վանի լճի ժայռոտ երկրում։ Ուրարտու կոչումը մինչև այժմ պահվել է անփոփոխ այդ տեղի և Արարատ սարի անուան մէջ։

«Քրիստոսից առաջ, VI դարում, մի արիական ցեղ, որին պարսիկ պատմաբանները արմէն անունն են տալիս, մտաւ մինչև այժմ անյայտ մնացած տեղերից (գուցէ հիւսիսային Սիրիայից և Կիլիկիայից) այն լեռնոտ երկիրը, ուր բնակվում էր ալարոդեան ցեղը, քշեց նրան Արաքսի հովիտից դէպի հիւսիս և, հաւանօրէն, ձուլեց իր հետ նրա մնացորդները։ Վրաստանը ժամանակ առ ժամանակ ընկաւ պարսից թագաւորների տիրապետութեան ներքոյ, թէ աքեմենեանների և թէ սասանեանների։ Այդ ցոյց է տալիս Մցխէթի հին անունը — Որմիզդի բերդ։ Այդ բերդը պաշտպանում էր Վրաստանի մուտքը Հայաստանից և իբերիացիների մայրաքաղաքն էր։ Պոմպէյ առաւ այդ երկիրը, հալածելով Միհրդատին և աւանդութիւնը նրան է վերագրում այն կամուրջի շինութիւնը Կուր գետի վրա, որի տեղ Նիկոլայ I կայսրի ժամանակ մի նորը շինվեց»։

ՊԱՆԴՈՒԽՏ-ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԸ

(Նամակ գաւառից)

—

Անդրկովկասեան զանազան նահանգներում հայ ազգաբնակութեան աշխատաւոր դասակարգը, կաշկանդված նիւթական ծանր պայմաններով, ստիպված է թողնել տուն տեղ և պանդխտել այլ և այլ վաճառաշահ քաղաքներ, որպէս զի մշակութիւնով և այլ պարապմունքներով կարողանայ իր ընտանիքի ապրուստը հայթայթել։ Այդ դասակարգի թւում մեծ կօնտինգենտ են կազմում Հին-Նախիջևանի, Նոր-Բայազէտի և այլ գաւառների պանդուխտները, որոնք օտարութեան ցուպը ղոնում են ձեռքները և լցնում են Բաթումի և Բաքուի գործարանները, Նոր-Նախիջևանի և Ռոստովի վաճառականները, Թիֆլիսի արհեստանոցները և քաղաքները և ուրիշ հարստաշահ տեղերը։ Այդ դասակարգի մի մասն են կազմում նաև Պարսկաստանի Խոյ, Սալմաստ և այլ տեղերի պանդուխտները։

Քանի տարին լրացնելուց յետոյ, այդ աշխատաւոր դասակարգը, որ ներկայացնում է իր երկրի տեղական ազգաբնակութեան երիտասարդ մասը, իսկոյն աչքը դարձնում է դէպի յիշված քաղաքները և հեռանում է մայրենի հողից։ Թողնելով իր երկրի առողջարար օդն ու ջուրը, ընտանեկան թեթև աշխատանքը, հողային սեփական մշակութիւնը և երկրագործական տնտեսութիւնը, այդ առողջ դասակարգը տարիներով և նոյն իսկ տասնեակ տարիներով մաշում է իրան պանդխտութեան մէջ։ Բացի դրանից, օտարական այդ աշխատաւոր դասակարգը, տարիներով հեռու ընտանեկան խնամատարութիւնից, հեռու հօրական տան և մայրենի երկրի վայելքից, քաղաքների ծանր աշխատութեան տակ ճնշված՝ վատնում է իր երիտասարդական առողջութիւնը և դառնում է հիւանդ, անդամալոյծ, կմախք... Ինչ ասել կուզէ, որ ֆիզիկապէս հալ ու մաշ եղած, երիտասարդական թարմութիւնը կորցրած այդ դասակարգը, տարիներից յետոյ վերադառնալով իր հայրենի երկիրը՝ արտադրում է իրանից աւելի վատ սերունդ։ Իսկ շատերը այդ դասակարգից միանգամայն կորցրած լինելով հայրենի երկրից և երկար ժամանակ ապրելով քաղաքներում՝ ընդմիշտ մոռանում են իրանց ընտանիքը, իրանց հարազատ ծնողներին և երբէք չեն վերադառնում իրանց տունը, այլ ընտելանալով քաղաքային կեանքին, նրանք ամուսնանում են և կամ ապօրինի կին պահում, բնակութիւն հաստատելով քաղաքներում։ Իսկ մայրենի երկիրը, զրկվելով աշխատող ոյժերից՝ մնում է խոպան, անմշակ, ընտանիքները՝ կարօտ իրանց պանդուխտներին, սիրելիները՝ փափագով իրանց դարիբին, կին-ամուսինները, վայ նրանց օրին, մնում են իբրև այրեցած էակներ, որոնք, հայոց եկեղեցու խստութիւնների պատճառով, չեն կարող նորից մտնել ամուսնական նոր կեանքի մէջ, չը նայելով, որ իրանց այր-ամուսինները տասնեակ տարիներով չեն վերադառնում և չէ էլ իմացվում թէ նրանք աշխարհիս որ անկիւնում են գտնվում։

Ուրախալի կը լինէր միանգամայն, եթէ երիտասարդ այդ աշխատող ոյժերը չը թողնէին իրանց տուն տեղը անխնամ, ընտանիքը՝ որբ, արտ ու արօտը՝ անտէր, հողը՝ անմշակ և քարշ չը գային այս և այն քաղաքի փողոցներում։ Կարծում ենք, որ հայրենի երկրում ունեցած օրական 20—30 կոպէկ եկամուտը աւելի լաւ է քաղաքների 40—50 կոպէկից, և սեփական հողի մշակութիւնը աւելի գերադասելի, քան քաղաքներում «տամալութիւն» անելը։

Գ. Ս.

ԵՐԴՎԵԱԼՆԵՐԻ ԴԱՏԱՐԱՆԸ ԱՍՏՐԱԽԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ

—

Աստրախան, յունիսի 10-ին

Աստրախանի նահանգին էլ վերջապէս վիճակվեց յուլիսի 1-ից մտնել Ռուսաստանի այն նահանգների շարքը, որոնք մի քանի տասնեակ տարիներ է ինչ որ վայելում են Ալէքսանդր II-ի դատաստանական ըէֆորմների շնորհը։ Մեր խօսքը երդուեալ դատաւորների մասին է։ Դա ժողովրդի դատաստան է. նրա մէջ, մեր դատաստանական օրէնքներով, մասնակցում է ամեն մարդ, առանց դաւանանքի խտրութեան, ով որ էլ լինի նա՝ գիւղացի, աշխատաւոր, փէշաքար, պաշտօնեայ, ազնուական, եթէ միայն նա համապատասխանում է այն պայմաններին, կամ աւելի լաւ է ասել, այն յատկութիւններին, որոնցով օրէնքը սահմանափակում է այդ իրաւունքը։ Այդ պայմաններն են՝ ռուսաց հպատակութիւն, յայտնի տարիք (20—70), կարդալութիւն ռուսերէն կարդալ և գրել, կայքի ցէնզ, որը լինում է 10 մինչև 20 դեսեատին հող կամ մի ուրիշ կայք, որը բերում է տարեկան 200—400 ր. արդիւնք, ամբիծ անուն, այսինքն չը պէտք է լինել դատաստանի տակ կամ թէ արդէն պատժված դատարանի վճռով, արտաքսված զանազան հասարակական ընկերութիւններից և այլն։ Կանայք բոլորովին չեն կարող լինել երդուեալ դատաւորներ, չեն կարող լինել նմանապէս բոլոր հոգևորականները, պօլիցիականները, առաջին երեք կարգի աստիճանաւորները, բոլոր խուլերը կամ թէ կոյրերը և վերջապէս մնային ծառան։ Ահա այդ պայմանները։

Երդուեալ դատաւորների վճիռը միշտ պէտք է հիմնված լինի խղճի, համոզմունքի վրա, այն համոզմունքի, որը նրանց մէջ գոյանում է գործի բոլոր կողմերը խոր քննելուց յետոյ։ Երդուեալ դատարանը վճիռը յայտնում են, ասելով այսպէս. «այո, մեղաւոր է», կամ «ոչ, մեղաւոր չէ», կամ «այո, մեղաւոր է, բայց արժանի է ներողամտութեան» (снисхожденія) և այլն. երդուեալ դատաւորները—դա դատաստանի ամենալաւ կերպն է, որին հասել է ժամանակակից արդարադատութիւնը։ Այդ դատաստանը լինում է խոշոր և ծանր գործերի համար, երբ մարդուն սպառնում է ծանր և ահռելի պատիժ՝ կախաղան, տաժանակիր աշխատանք, աքսոր կամ թէ բանտ։ Այդպիսի դժուար դրութեան մէջ՝ յանցաւորը ապահով կարող է լինել, որ իրան պէտք է դատեն այնպիսի մարդիկ, որոնք մօտ ծանօթ են այն շրջանի և կեանքի այն պայմանների հետ, որոնց մէջ ապրել է յանցաւորը մինչև իր յանցանք կատարելը։ Եւ ճշմարիտ, երդուեալների դատարանի 30-ից աւելի տարիների գործունէութիւնը Ռուսաստանում կատարելապէս ապացուցեց, որ այդ դատարանը զարմանալի ճշմարտութեամբ լուծեց անթիւ գործեր և միշտ մնաց ուղիղ և հաստատ իր կոչման բարձրութեան վրա։ 1894 թուականին Պետերբուրգում, դատաստանական պալատների գլխաւոր նախագահների և պրօկուրօրների ժողովում, ահագին մեծամասնութիւնը զօրեղ պաշտպան հանդիսացաւ երդուեալ դատարանին։ Այդ դատարանի ուղիղ և կանոնաւոր ընթացքը, ինչպէս նկատեց արդարադատութեան մինիստրը, որը յունիսի 9-ին եկաւ Աստրախան, կախված է այն սրբազան պարտաւորութիւնը կատարելուց, որը Կայսրի հրամանով այսուհետև տրվում է Աստրախանի նահանգի ժողովրդին։ «Ժողովուրդը, ասաց մինիստրը, պիտի մեծ համակրանքով և եռանդով վերաբերվի իր նոր պարտաւորութեանը, կատարելով նրան արդար և բարեխիղճ կերպով»։

Ա. Առաքելեան

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—

Ցունիսի 7-ին

Ցունիսի 6-ին կենդանացել էր Հին-Նախիջևանը։ Շրջակայ գիւղերից ազգաբնակութիւնը խմբերով շտապում էր քաղաք՝ տեսնելու Պարսկաստանի Թաւրիզ քաղաքից եկած պարսիկ ըմբիշին (փէյլավանին), որը պիտի գօտեմարտէր աստապատցի երիտասարդ Ստեփանի հետ։ Գօտեմարտը տեղի պիտի ունենար Իսմայիլ-խանի տան հանդէպ, հրապարակի վրա։ Մի քանի օրեր շարունակ սպասվող ըմբշամարտութիւնը գրաւել էր ազգաբնակութեան բուռն հետաքրքրութիւնը. իսկ գիւղերում թուրքերը ոգևորված, իրանց յատուկ չափազանցութեամբ, նկարագրում էին «փէյլավանի» գերբնական ոյժը, «երկնատուր հունարը», համեմատելով Իսկանդար Զուլֆիկարի հետ (Ալէքսանդր Մակեդոնացու)։ Պէտք է ասել, որ պարսից ժողովուրդը Մակեդոնացուն պարսկացրած՝ համարում է Իրանի փէյլավանների ներկայացուցիչ։ Առաւօտեան ժամը 9-ին, յիշեալ հրապարակի վրա հաւաքվել էր երկաթարի չափ թուրք ամբոխ. եկել էին նոյնպէս հարիւրի չափ հայեր և ռուսներ։ Ազգաբնակութիւնը բացօդեայ սրտատրոփ սպասում էր։ Ահա յանկարծ երևան եկաւ մի պարսիկ, մերկ մարմնով, հագած մի հատ անդրավարտիք. փէյլավանը սկսեց զանազան շարժումներ անել, վեր ու վար թռչկոտել, ծամածռութիւններ գործել և որ աւելի զարմանալին է՝ ամբողջ ոյժով բղաւել, որը լսվում էր շատ հեռուից։ Հանդիսականները, գոհունակութեան ժպիտը երեսին, լարված ուշադրութեամբ հետևում էին ըմբիշի ամեն մի շարժմունքին, ամեն մի գոռոցին, անդադար «ամին» կրկնելով։ Փէյլավանն արդէն տեղեկացել էր, որ ախոյեան Ստեփան Օհանեանին արգելված էր գօտեմարտելու իր հետ, որ և է անախորժութեան տեղիք չը տալու համար թուրքը և հայ ազգաբնակութեան մէջ։ Այդ պատճառով նրա և թուրքերի ոգևորութիւնը ծայրայեղ էր, մանաւանդ երբ փէյլավանը ուժգին ձայնով գոչեց՝ «գոյ գեալսուն բու մէյդանա, քիմ գեալուր գեալսուն, արմանիդան, ռուսդան, եահուդիդան վա հար բիր գեավուրդան» (թող առաջ գայ այս հրապարակը, ով ուզում է գայ, հայերից ռուսներից, հրէաներից կամ այլ անհաւատներից)։ Եւ երբ օդի մէջ նետած փայտը վայր էր ընկնում փէյլավանի ձեռքից, ըմբիշը գոռում էր «մալլաթ չէյթանա» (անէծք սատանային). հազարաւոր ամբոխը միաբերան կրկնում էր «անէծք չէյթանին»։ Այդ օրը դէրվիշները, թէյարանների առաջ, հրապարակներում, փողոցներում անդադար գովաբանական երգերով էին նկարագրում Իրանի այդ փէյլավանին. վաղը փէյլավանը, ասում են, մեկնելու է Երևան։ Աւելացնենք և այն, որ հանդիսին ներկայ էր և գեներալ-լէյտենանտ Իսմայիլ-խան Նախիջևանսկին, ընտանիքով։ Երբ ըմբիշը հեռացաւ հրապարակից, Հին-Նախիջևանը նորից նախկին կերպարանքը ստացաւ, ընկնելով նախկին մեռած դրութեան մէջ... Ահա ձեզ մի քաղաք, ուր ոչինչ կեանք չը կայ, և որը ոգևորվել կարող է մի ինչ որ փէյլավանով, կոպիտ ոյժի այդ կոպիտ ներկայացուցիչով...

Ա. Տէր-Ստեփանոսեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Պեատիգորսկ, յունիսի 16-ին

Զարմանքով կարդացի «Մշակի» 99-րդ համարում՝ Բերլինից գրած մի յարձակողական նամակ իմ դէմ, իմ «Արենակցական ամուսնութիւն» յօդուածի առիթով։ Ամեն մի բարեխիղճ հեղինակի համար, որը գրում է մի բան ասելու և ոչ թէ իր անունը տպագրված տեսնելու համար, շատ հաճելի է, որ նրա գրուածքը լուրջ քննութեան ենթարկվի։ Ես ևս երջանիկ կը լինէի. եթէ իմ գրչի տակից դուրս եկած աշխատութիւնները խիստ կերպով քննադատվէին, որովհետև «կարծիքների ընդհարումից ծագում է ճշմարտութիւնը». բայց կարդալ այդպիսի ոճով և տօնով գրված մի կարծիք, լսել ընդհանուր բառերով և առանց փաստային հիմունքների վիրաւորական ակնարկներ, այդ շատ ցաւալի բան է, որովհետև այդ ցոյց է տալիս, որ մենք դեռ հասունացած չենք սառնասրտութեամբ վերաբերվել գոնէ դէպի գիտական հարցերը։ Ցանկալի էր, որ Բերլինի յօդուածագիրը, պ. Ց. Ցովհաննիսեան, փոխանակ զօկտօրալ տոնով ինձ սովորեցնելու, թէ ինչպէս պէտք է գիտական յօդուածներ գրել, ինքը ուշադրութիւնով կարդար իմ գրուածքը և մի բոպէ ենթադրէր, որ մի ուրեմն չեցել է նաև իր դժբախտ օրերը։ Միաբանութիւնը դրամական մեծ անձկութեան պատճառով ստիպվել է 1873-ին տպարանի եւրոպական մասը վարձու տալ և ապա նոյն իսկ ծախել, և իր ձեռքում պահել է միայն արևելեան բաժինը։ Վերջապէս 1889-ին նա դարձեալ աջողել է ձեռք բերել այդ օտարացած մասը և այնուհետև տպարանն սկսել է վերստին իր նախկին ոյժով և աւելի փայլով գործել։

Գրքի երկրորդ մասը կազմում է միաբանութեան ծախսով հրատարակված բոլոր (թէ իր և թէ մասամբ ուրիշների հեղինակած) աշխատութիւնների մանրամասն ցանկը՝ գերմաներէն։ Այս ցանկից երևում է, որ Վիէննայի Մխիթարեան միաբանութիւնը՝ իր տպարանի գոյութեան սկզբից մինչև ներկայ 1898 տարվայ մայիսը հրատարակել է ընդամենը 1023 գիրք, մեծ և փոքր միասին վերցրած, որոնցից՝ հայերէն 323 հատ, գերմաներէն 539, լատիներէն 69, թուրքերէն (հայատառ) 47, իտալերէն 14, ֆրանսերէն 9, բոհեմերէն 9, յունարէն 6, լեհերէն 4, ռութիներէն 2 և ունգարերէն 1 հատ։

Հայերէն գրքերը՝ իրանց բովանդակութեամբ բաժանվում են այսպէս՝

Ընդհանուր բովանդակութեամբ .	. 13
Կրօնական.	. 49
Աշխարհագր. ազգագր. ուղևոր. .	. 39
Պատմական, դրամագիտ. գեղարուեստ.	. 24
Արուեստաբ. արդիւնաբ. վաճառակ.	. 9
Սրբոց վարք, կենսագրութիւն .	. 19
Մանկական և զբօսալի գրքոյկներ .	. 29
Եկեղեցական գիրք . . .	. 15
Լեզուագիտական . . .	. 31
Գրականութիւն և պատմութիւն .	. 25
Մաթեմատիկական, երկրաչափական	. 10
Երաժշտութիւն և երգեցողութիւն .	. 2
Բնական պատմութիւն . . .	. 5
Փիլիսոփայութիւն . . .	. 5
Բնագիտութիւն . . .	. 3
Իրաւագիտութիւն . . .	. 1
Ճառասացութիւն . . .	. 5
Դպրոցական-կրթական . . .	. 15
Աստուածաբանութիւն . . .	. 24

Այս ցուցակից դուրս են այն հազարաւոր գրքերը զանազան լեզուներով, որոնք տպված են նոյն տպարանում օտարների աշխատութեամբ և ծախսով։

Գրքի վերջում գրված են այն բոլոր տառերի նմուշները, որոնք փորագրված և ձուլված են Մխիթարեան տպարանում. այդ տառերն են հայերէն, որ ամենաճոխն է, ռուս-սերբական կիրիլեան (սլաւ-եկեղեց.), եբրայեցերէն, ասորերէն և չինարէն։ Իսկ եւրոպական լեզուների տառերը գնված են եւրոպական զանազան ձուլարաններից։ Տպարանն այժմ գրաւում է վանքի շինութեան մի ամբողջ թևը, 3 ընդարձակ յարկ։ Ներքևի յարկում դրված են մի մեծ շոգեշարժ մեքենայ, շոգեկաթսաներ և 7 շոգեշարժ արագատիպ մամուլ. այս յարկումն է նաև ձուլարանը։ Երկրորդ յարկի մէջն են տպարանի գրասենեակը, թղթի և տպագրված առարկաների մթերանոցը, շարելու արկղներ և շարողներ։ Երրորդ կամ վերին յարկը նոյնպէս շարաան է, ուր աշխատում են 50-ից աւելի գրաշար։ Այդտեղ զետեղված են շարելու այլ և այլ առաղձը, 3 ձեռքի մեքենայ և 3 ամերիկական արագատիպ մամուլ։ Տպարանի գործաւորների թիւն է 80-ից մինչև 100։ Հայերէն շարողները գերմանացի կամ այլ օտար գրաշարներ և գրաշարուհիներ են։

Ահա այն տպագրական գործունէութիւնը, որ ունեցել է Վիէննայի Մխիթարեան միաբանութիւնը,—չնորհիւ իր յարատև ջանքերի և անընկուն աշխատութեան։ Այդ գործունէութիւնը այնքան արդիւնաւոր և ըստ ամենայնի «մխիթարական» է, որ միաբանութիւնը մեծ բաւականութեամբ կարող է տօնել իր տպարանի 125 ամեակը, որ լրանում է 1900-ին և ապահով ենք, որ XX դարումն էլ նա կը շարունակէ ընթանալ այն առաջնակարգ ուղղութեամբ, որին հետևում է այժմ։

Սարուխան

(Կայսերական ալբոմ) անունը՝ 1858-ին նուիրված է այժմեան Ֆրանց Յովսէփ I կայսրին, իբրև բարեմաղթութիւն, երբ նրա կեանքի դէմ եղած յանցաւոր փորձից կայսրն անվնաս ազատվեց *)։ Հ. Գալէմքարեանի գրքի մէջ առաջ է բերված Մաքսիմիլիան արքեդուքսի (Մէքսիկայի կայսրի)՝ այդ հրատարակութիւնից մի օրինակ ստանալու առթիւ գրած ինքնագիր նամակը իտալերէն լեզուով, որ վերին աստիճանի համակրական է և պատուաբեր է միաբանութեան համար։

Տպարանն ունի իր սեփական ընդարձակ ձուլարանը, ուր 1000-ից աւելի եւրոպական և 2200-ից աւելի հայկական տառերի մայրեր են կտրված. իսկ սրանցից թափված մայրերի թիւը 30,000-ից էլ անցնում է։ Ձուլարանն ունեցած է ամենաճարտար վարպետներ։ Այտնեան, որ բացի մեծ լեզուագէտ լինելուց, մի և նոյն ժամանակ շատ ճաշակաւոր արուեստագէտ է և յայտնի է մանաւանդ իբրև ճարտար գծագրող, մեծ մասնակցութիւն է ունեցած ձուլարանի այդ առաջադիմութեան մէջ ևս, հնարելով բազմաթիւ նորաձև տառեր, գլխագրեր և զարդագրեր։

Իբրև ամբողջացում այս պատմութեան, աւելորդ չէ յիշել, որ Մխիթարեան տպարանն ուրախ, ներքևի յարկում դրված են մի մեծ շոգեշարժ մեքենայ, շոգեկաթսաներ և 7 շոգեշարժ արագատիպ մամուլ. այս յարկումն է նաև ձուլարանը։ Երկրորդ յարկի մէջն են տպարանի գրասենեակը, թղթի և տպագրված առարկաների մթերանոցը, շարելու արկղներ և շարողներ։ Երրորդ կամ վերին յարկը նոյնպէս շարաան է, ուր աշխատում են 50-ից աւելի գրաշար։ Այդտեղ զետեղված են շարելու այլ և այլ առաղձը, 3 ձեռքի մեքենայ և 3 ամերիկական արագատիպ մամուլ։ Տպարանի գործաւորների թիւն է 80-ից մինչև 100։ Հայերէն շարողները գերմանացի կամ այլ օտար գրաշարներ և գրաշարուհիներ են։

Ահա այն տպագրական գործունէութիւնը, որ ունեցել է Վիէննայի Մխիթարեան միաբանութիւնը,—չնորհիւ իր յարատև ջանքերի և անընկուն աշխատութեան։ Այդ գործունէութիւնը այնքան արդիւնաւոր և ըստ ամենայնի «մխիթարական» է, որ միաբանութիւնը մեծ բաւականութեամբ կարող է տօնել իր տպարանի 125 ամեակը, որ լրանում է 1900-ին և ապահով ենք, որ XX դարումն էլ նա կը շարունակէ ընթանալ այն առաջնակարգ ուղղութեամբ, որին հետևում է այժմ։

Սարուխան

*) Այս դէպքը պատահեց 1853 թ. փետրվարի 10-ին։ Այս ազատութեան յիշատակին կանգնված է Վիէննայի յայտնի Votivkirche (ուխտով շինված) եկեղեցին։

րիչն էլ կարող է հասած լինել այն բարձր աշխարհայեցողութեանը, որին հասել է ինքը: Եթէ պարոնը այսպէս վերաբերվէր դէպի իմ յօդուածը, նա չէր գրի, թէ ես «արդարացնում եմ մեր մէջ եղած խնամիական չհասութեան ձեւերը:» Ես պատրաստում եմ մի աւելի ընդարձակ գրուածք՝ մեր մէջ եղած բոլոր չհասութիւնների մասին, բայց իմ «Արենակցական ամուսնութիւն» յօդուածում ես չեմ քննել մեր մէջ եղած չհասութեան ձեւերը և ուրեմն չէի էլ կարող արդարացնել այդ ձեւերը: Այս սխալը, յուսով ենք, կը ստիպի պ. յօդուածագրին ուշադրութիւնով կարդալ իմ գրուածքը և եթէ նա ուսումնասիրել է այդ իրողները՝ լուրջ կերպով քննադատէ նրան, որի համար կարող եմ միայն շնորհակալ լինել: Միայն, աղաչում եմ, ճիշդ բառացի քաղուածքներ անել յօդուածից և այնպէս հերքել, և ոչ թէ սխալ եզրակացութիւններ անել ու նրանց վրա հիմնել իր դատողութիւնը:

Վերջացնելով, չեմ կարող չը յիշել այստեղ մի ծիծաղելի բան: Երկու-երեք տարի սրանից առաջ իմ «Հիպոտիսմ» գրքի առիթով Թիֆլիսի հայոց մի թերթի մէջ մի պարոն հինգ-վեց երկար բանասիրական գրեց, որոնց մէջ աշխատում էր ինձ անհաւատ—ատ էլ ստ դուրս բերել: Այժմ պ. Յովհաննիսեանը իմ մի ուրիշ գրուածքի մասին յօդուած է գրում, և ինձ համարեա կը օնամոլ և հնամոլ է ձևացնում: Ինչպէս բացատրել այս հակառակ կարծիքները:

Բժ. Վահան Արծրունի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թէօդոսիա, յունիսի 8-ին

Խնդրեմ բարեհաճեցէք այս երկտողը զետեղել «Մշակի» մէջ: Խորէն եպիսկոպոս Ստեփանէի աշխարհաբար թարգմանած Մովսէս Խորենացու պատմութեան բ. տպագրութեան մասին պ. Ս. Մալխասեանցի «Մշակի» մէջ յայտնած կարծիքների դէմ կարելի է վիճել, քանի որ Խորենացու պատմութեան նկատմամբ դեռ երկար ժամանակ չէ կարող ասվել վերջին խօսքը: Սակայն թողնում եմ այդ բոլորը, ցանկանալով մի քանի խօսք ասել այն կէտի մասին, որ իբրև թէ «սրբազան թարգմանիչը մի առ մի թում է նրա թարգմանութեան առաջին տպագրութեան մասին եղած քննադատութիւնները, իսկ պ. Խալաթեանցի անունը անգամ չէ յիշում, որի քննադատութիւնից շատ օգտվել է»: Պ. Մալխասեանց, ի լուր ընթերցող աշխարհի, հրապարակով, այս անուանում է անարդարութիւն Խորէն եպիսկոպոսի կողմից: Վերջին օրերս, երբ ուսումնասիրում էի Մովսէս Խորենացու աշխարհաբար նոր հրատարակութիւնը, կամ աւելի ճիշդ է ասել, նոր գեղեցիկ թարգմանութիւնը, որքան զարմանք պատեց ինձ, երբ նկատեցի պ. Մալխասեանցի թեթև վերաբերմունքը դէպի մի այսպիսի, իր խօսքովն ասեմ՝ «պատուական աշխատութիւնը» և աշխատասիրողը: Նա առանց հիմնաւորապէս գործը քննելու, հրապարակով զրպարտում է մի յարգելի անձնաւորութիւն: Առաջարկում ենք պ. քննադատին կարդալ այս նոր թարգմանութեան 474 երեսի 674-րդ ծանօթութիւնը, որ է «Գ. Խալաթեանցը, որի՝ Մովսէս Խորենացու պատմութեան մեր թարգմանութեան՝ շաղփաղի քննադատութեան մասին կարելի էր բան ասել, եթէ իր դատապարտութեան կնիքը իր մէջ չը կրէր ամեն բանիմաց ընթերցողի աչքին (անմախանձ դիտողութիւններից օգուտ քաղեցինք ի հարկէ): Այս հատուածում գլխին շատ զօռ է տալիս խոր, հոր, փոս բառերի վերաբերմամբ: Փոս (ասում է) զետնի բնական պատառուածք է նշանակում: Շատ սխալ է, որովհետև ասում ենք փոս փորել: Ելնէն ասում է. «փոս հատանել»:—Այժմ թող անաչառ ընթերցողը ինքը դատէ: Ունէինք արդեօք կատարեալ իրաւունք թեթև անուանելու պ. Մալխասեանցի վերաբերմունքը դէպի այս գործը:

Ա. Բ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են, որ Էրզրումի փաշան կարգադրել է, որպէս զի սրանից յետոյ Կովկասից վերադարձող այն գաղթականներին թոյլ տրվի մտնել Թիւրքաց սահմանը, որոնք կունենան անցագիրներ: Ռուսաց կառավարութեան կողմից անցագիրներ ունեցողները, պէտք է նախ քան սահման անցնելը, այդ անցագիրները ներկայացնեն Թիւրքաց հիւպատոսներին, վաւերացնելու համար:

—

Մեր ընթերցողներին յայտնի է, որ երկու տարի սրանից առաջ, Թագաւոր Կայսրի թագադրութեան առիթով, Թիֆլիսի քաղաքային դուման որոշել էր բանալ Թիֆլիսում հասարակական գրադարան-ընթերցարան, վերցնելով ծախքերը քաղաքի վրա: Այդ մի և նոյն որոշումը կրկնեց և դումայի ներկայ կազմութիւնը, յատկացնելով գրադարան-ընթերցարանին տարեկան 4000 ռուբլի: Այս օրերս Թիֆլիսի նահանգապետը տեղեկացրեց դումային, որ իշխան Կառավարչապետը դումայի խնդիրքը թողեց առանց հետևանքի: Պատճառաբանութեան մէջ ասված է, որ Թիֆլիս քաղաքը ներկայումս մեծ կարիքներ ունի քաղաքի բարեկարգութեան վերաբերութեամբ, որոնք պէտք է նախօրօք հոգացվեն, թողնելով գրադարան-ընթերցարանի բացումը յարմար միջոցին:

—

Մեզ հաղորդում են Բաթումից, որ այս օրերս այստեղից ճանապարհ ընկան մօտ 100 գաղթականներ դէպի Թիւրքաց Հայաստան, ստանալով ճանապարհի ձրի տոմսակ և դրամական փոքրիկ նպաստ:

—

«Кавказъ» լրագիրը այժմ մի նոր առաջարկութիւն է անում... Շուշու դուման քաղաքագլուխ է ընտրել պաշտօնաթող գնդապետ Կարապետ բէկ Դանիլովին: Առանց սպասելու, որ նոր քաղաքագլուխը հաստատվի, ստանձնի իր պաշտօնը, որպէս զի կարելի լինի այս և այն կարծիքը յայտնել նրա գործունէութեան վերաբերմամբ, պ. Վելիչկօի օրգանը արդէն ծակ մարգարէութիւններ և գուշակութիւններ է անում. նա համոզված է, որ նոր քաղաքագլուխը չէ կարող կարգի դնել քաղաքի խճճված գործերը և աւելացնում է իր Շուշու թղթակցի բերանով. «Շատ փորձված քաղաքացիների կարծիքով, բոլոր դժուարութիւնները մէջտեղից կը վերանան, եթէ քաղաքագլուխը նշանակվի կառավարութեան կողմից»: Էլ ինչ հարկ կայ մէջտեղ բերել քաղաքացիներին. ուղղակի ասացէք, որ դուք էք ցանկանում այդ, և շատ յայտնի պատճառներով: Հետաքրքիր է իմանալ, արդեօք «Кавказъ» լրագիրը կը քարոզէր այդպիսի, նոյն իսկ օրէնքի տեսակէտից, անյարմար միտքը, եթէ Շուշու քաղաքագլուխ ընտրված լինէր դիցուք մի Թուրք: Մնում է, որ պ. Վելիչկօի օրգանը քարոզի, թէ ձայնաւորները նշանակովի լինեն և ոչ ընտրովի:

—

Անդրկովկասի այգեգործները արդէն բաւականին ընտելացել են ծծումբ և պղնձի արջասպ գործածելուն: Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը այս տարի ստացել է 80,000 ռուբլու պատուէր, որոնցից 48,000 ռ. արդէն կատարված է, միւսներն էլ պէտք է կատարվեն առաջիկայ շաբաթներում: Ընկերութիւնը մի յայտնի տոկոս վերցնում է իր գործավարութեան համար: Այդ տոկոսը ներկայ 1898 թուականին կը կազմի մօտ 2000 ռ. գումար, որ մտադրութիւն կայ յատկացնել ընկերութեան գործունէութեան լայնացնելուն:

—

Բագուի նաւթագործների խորհրդի ծառայողները ահա երրորդ ամիսն է, որ իրանց ռոճկից հանում են 1% Ռուսաստանի և մասնաւորապէս Կովկասի կարօտ գիւղացիների օգտին: Ժողովված գումարի կէսը նշանակված է Ռուսաստանի ներքին նահանգների համար, իսկ միւս կէսը Անդրկովկասի համար: Խորհրդի գործերի կառավարիչ Ա. Դաստակեան ուղարկել է ապրիլ և մայիս ամիսներում գոյացած գումարի կէսը, այն է 80 ռուբլի, կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան խորհրդին՝ Անդրկովկասի կարօտ գիւղացիների համար:

—

Հինգշաբթի, յունիսի 18-ին, ռուսաց դրամատիկական խումբը ներկայացրեց Բօմարշէի կլասիկական «Ֆիգարօյի հարսանիք» կոմեդիան, որի մասին Նապոլէօն ասում էր, թէ «այդ պիէսայի չնորհիւ բարձրացաւ յեղափոխական դրամայի վարագոյրը», մի վարագոյր, որ, ինչպէս երևում է, շատ քիչ է հետաքրքրում Թիֆլիսեցիներին, որովհետև թատրոնը գրեթէ բոլորովին դատարկ էր այդ երեկոյ: Ֆիգարօյի դերը պ. Պետիպա կատարեց բաւական աջող, եթէ չը հաշուենք վերջին գործողութեան գեղեցիկ մենախօսութիւնը, որ նա արտասանեց առանց անկեղծ ոգևորութեան: Միւս դերակատարները ստոր էին իրանց դերերից: Զը նայելով դրան, սակաւաթիւ հանդիսատեսները մեծ հաճոյքով հետևում էին այդ փայլուն կոմեդիայի ընթացքին:

—

ՕՐԲԱՋԱՐԻՑ մեզ գրում են. «Շատ վաղուց է, որ մեր քահանան և ժողովուրդը դժուած են իրար դէմ, մէկ մէկու տուն չեն յաճախում, թէ քահանան է պաղել եկեղեցուց և թէ ժողովուրդը: Երկու տարի առաջ, մեր թեմի կառավարչի կարգադրութեամբ, մէկը միւսի ետևից Օրբաղար են եկել Նոր-Նախիջևանի յաջորդ Մխիթար վարդապետը և Մելիտօպոլի քահանայ՝ տէր-Սրապիոն Սամուէլեանը՝ ժողովրդի մէջ եղած անբաւականութիւնները քննելու, բայց այդ քննութիւնները ոչ մի բարերար հետևանք չեն ունեցել: Նոյն անբաւականութիւնն ու պաղութիւնը դեռ մինչև այժմ էլ կան ժողովրդի ու քահանայի մէջ: Մի քանի անգամ թէ ժողովուրդը և թէ քահանան խնդրագրերով դիմել են առաջնորդին՝ իրանց այդ անախորժ դրութեանը վերջ դնելու համար քահանային նշանակել մէկ ուրիշ տեղ, թողնելով ժողովրդին ընտրել իր համար մի նոր քահանայացու: Սակայն առաջնորդը ոչ մի ուշադրութիւն չէ դարձրել այդ արդար խնդիրներին:»

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Հայացահատիկների հունձը մեզանում արդէն սկսվեց, բերքը միջակ է: Հայացահատիկների գները սկսել են իջնել. ցորենն այժմ վաճառվում է շուկայում 1 ռ. 20—1 ռ. 30 կօպէկով: Եղանակները խոնաւ են անցնում, որից կարող էին առաջ գալ խաղողի վազերի վրա զանազան հիւանդութիւններ, բայց ուրախալի է, որ թէ քաղաքի և թէ շրջակայ գիւղերի այգիները դերծ են մնացել առ այժմ «միլդիու», «օիդիում» և այլ հիւանդութիւններից: Սալորի պտուղները և տերևները ղգալի կերպով վնասվել են «ТЛЯ» կոչվող փոքրիկ կանաչագոյն միջատից և «դրիբկի» հիւանդութիւնից:»

—

ՂԶԼԱՐԻՑ մեզ գրում են. «Յունիսի 14-ին, սուրբ Լուսաւորչի եկեղեցում կատարվեց Գլադստօնի յիշատակին հոգեհանգիստ, որի առիթով պատարագիչը, Պետերբուրգի Աբրահամ քահանայ Շեխինեանցը քարոզեց և բացատրեց Գլադստօնի գործունէութեան մի քանի նշանաւոր կէտերը:»

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Բագուից գնացած գաղթականներին ուղեկցող տէր-Աբգար քահանան և նրա աշխարհական ընկերը Հին-Բայազէտից վերադարձան: Հին-Բայազէտի փաշան թոյլ չէր տուել նրանց աւելի առաջ գալու, և առաջարկել է վերադառնալ Կովկաս»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄ

—

Ահա թէ ինչպէս ափ իջաւ գեներալ Շաֆուէրի զօրաբանակը: Յունիսի 11-ին, առաւօտեան ժամի մօտ 9-ին, ամերիկական նաւերը անակնկալ կերպով կրակ սկսեցին ծովեզերեայ այն բլուրների դէմ, ուր կարելի էր ենթադրել թէ դարանամուտ են եղել սպանիական զօրքերը: Մի և նոյն ժամանակ զօրքեր փոխադրող նաւերի արանքներում երևացին չոգեշարժ բարկասներ, որոնք քաշելով իրանց ետևից բաղմաթիւ մակոյկներ, գնացին զանազան ուղղութեամբ: Հետզհետէ այդ մակոյկները լցվեցան զօրքերով: Մօտ մի ժամ անցած՝ երևան եկան կուբացի խուզարկու խմբերը և այդ ժամանակ նաւերի ռմբակոծութիւնը աւելի սաստկացաւ. կրակը ուղղված էր դէպի երկրի ներսը և պիտի հովանաւորէր զօրքերի ափ իջնելը: Սպանիացիները չէին պատասխանում: Ամերիկական զօրքերը մեծ ոգևորութեամբ էին ափ իջնում: Երբ ամենքը ափին էին, եկան ձիաւոր ապստամբները, որոնք ռմբակոծութեան ժամանակ թաղված էին, և շընորհաւորեցին ափ իջնողներին:

Սպանիայում դարձեալ սկսվել է յուզմունք: Սենատում և կօրտեսում աղմկալից նիստեր եղան: Ճառախօսները սաստիկ յարձակվեցան կառավարութեան դէմ, մեղադրելով նրան կատարեալ անընդունակութեան մէջ: Սագաստա հազիւ կարողացաւ հերքել այդ յարձակումները. ասում են որ կառավարութիւնը կընկնի: Միւս կողմից սպանիական դահի թեկնածու Դոն-Կարլոս յայտնել է, որ ինքը կը հաշուեր մինչև այն ժամանակ, երբ Սպանիայի պատիւը կը կանգնի իրան: Եթէ Դոն-Կարլոս կատարէ իր ասածը, Սպանիան, պատերազմական մի խոշոր անաջողութիւնից յետոյ, կը դառնայ ներքին յեղափոխութեան ասպարէզ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Անգլիական առևտրի մինիստր Բիչի պատպատուղականների ժողովում մի ճառ արտասանելով, չօշափեց Անգլիայի և Ռուսաստանի յարաբերութիւնների հարցը: «Եթէ Անգլիան, ասաց նա, պատերազմ սկսի Ռուսաստանի դէմ Չինաստանում, դրա հետևանքը կը լինի պատերազմել Ռուսաստանի հետ Եւրոպայում և Հնդկաստանում ու Ֆրանսիայի հետ՝ արևմտեան Աֆրիկայում: Կարող է պատերազմ սկսվել Ֆրանսիայի հետ և Եւրոպայում: Այդպիսի պատերազմ հեշտ չէ անել: Ոչ ոք չի ցանկանայ, որ Անգլիան պատերազմ սկսի առանց համապատասխան հիմքի այնպիսի մեծ պետութիւնների հետ, ինչպէս Ռուսաստանը և Ֆրանսիան, կամ երկուսի հետ միասին: Այդպիսի պատերազմը կարող է անհրաժեշտ դառնալ և կը սկսվի, երբ հարկը պահանջի:»

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Համասլաւոնական ծօնախմբութիւնը, որ Պրագայում տևեց երեք օր, տակն ու վրա է արել գերմանական և ունգարական մամուլը: Մանաւանդ սաստիկ ազդեցութիւն է արել Պետերբուրգի «Свѣтъ» լրագրի խմբագիր Կօմարօվ, որ ներկայացուցիչ էր Պետերբուրգի դումայի կողմից: Իր ճառի մէջ Կօմարօվ հրաւէր կարդաց բոլոր սլաւոնացիներին համախմբվել միասին, ձեռք ձեռքի տալ և միահամուռ արշաւանք սկսել գերմանականութեան դէմ, որ սպառնում է սլաւոնական աշխարհին: Գերմանական մամուլը, ի հարկէ, սաստիկ կատաղած է այդ ճառի առիթով և խիստ լեզու է բանեցնում թէ Կամարօվի և թէ սլաւոնականութեան դէմ: Ռուսաց լրագիրներն էլ իրանց կողմից յարձակումներ են գործում գերմանացիների դէմ. այնպէս որ Պալացկիի ծննդեան հարիւրամեակի ծօնախմբութիւնը երկու մեծ ազգութիւնների մէջ աւելի խոր վիհ գոյացրեց: Կային և այնպիսի մարդիկ, որոնք ծայրայեղ չօվինիստութեան կողմնակիցներ չը լինելով, խօսում էին աւելի մեղմ, չափաւոր լեզուով: Այդպէս, հռչակաւոր իրաւաբան Սպասօվիչ, որ նոյնպէս ներկայ էր Պրագայի ժողովին, լեհերէն լեզուով արտասանեց հետևեալ սրամիտ ճառը. «Այստեղ ես յիշում եմ 1867 թուի ժողովը Մօսկվայում, ուր ներկայ էր և Պալացկին: Ճաշկերոյթի ժամանակ չէխերի պատգամաւոր դոկտոր Բիգէր ասաց. «Մօսկվայում կայ 300 զանգակատուն և ամեն մէկի մէջ կախված են մի քանի զանգակներ, որոնք հընչում են ներդաշնակ»: Նա հարցրեց, լաւ է արդեօք, որ այդ բոլոր զանգակները միասին հընչէին, թէ ամենքը ձուլվէին և մի մեծ զանգակ դառնային, որը, ճիշդ է, կը թնդար ահեղ ձայնով, բայց չէր տայ այնպիսի ներդաշնակութիւն: Այն ժամանակ այս հարցին պատասխան չը գտնվեց: Այդ օրից անցաւ 30 տարի, հասակ առաւ մի նոր սերունդ, իսկ հարցը դեռ սպասում է պատասխանին: Ինձ հարցնէք, լաւ կը լինէր, որ մեզ պատասխանէին թէ ներդաշնակաբար հնչող մի քանի զանգակները աւելի լաւ են, քան մի հատ մեծ զանգակը առանց ներդաշնակ ձայնի: Կարծում եմ, որ վերջի վերջոյ պիտի համաձայնվեն և ամենաջերմ ռուս հայրենասէրները, որ ամեն մի ժողովուրդ պիտի անկախ զարգանայ իր կտուրի տակ: Գուցէ դեռ մի 20 տարի էլ կանցնի, մինչև որ առաջին քայլը կանվի, և մի 20—30 տարի էլ մինչև երկրորդ քայլ կանվի, որ սլաւոնական դաշափարը զարգանայ այս ուղղութեամբ. բայց ես համոզված եմ, որ սլաւոնական հարցը ուրիշ միջոցով չէ կարելի լուծել»:

***

Օգտակար միկրօբներ: Կարօն անունով մի պարոն իր կալուածքում հետազօտութիւններ անելու միջոցին գտել է մարգագետնի հողի մէջ մի միկրօբ, բացիլ, որ շատ օգտակար է երկրագործի համար: Այդ միկրօբը հողի մէջ շատ շուտ զարգանում է, բազմանում և նպաստում հացաբոյսերի աճման: Այդ միկրօբի չնորհիւ հունձը աւելանում է 1½ և 2 անգամ: Միկրօբը ժողովում է ազօտ և տալիս է բոյսին ու այդպիսով փոխարինում է պարարտացնող այն նիւթերը, որոնց գլխաւոր բաղադրութիւնը ազօտն է: Կարօնի արած գիւտը խսկոյն կրկնվեց և ստացվեց շատ միւսթարական հետևանք: Մի քիմիական գործարան սկսեց այդ միկրօբներից կազմել յատուկ փոշի, որ ծախվում է բացիլլուս էլենբախենզիս անունով, ի պատիւ գիւտանողի, որ Էլենբախ քաղաքացին է: Այդ փոշու 3 գրամը բաւական է մէկ դեսյատին հող պարարտացնելու համար ազօտով:

Ֆրանսիական նշանաւոր գիտնական Գրանդոյատուկ փորձեր արեց ստուգելու նոր բացիլի պարարտացնող ոյժը և ստացաւ աւելի էլ լաւ հետևանքներ, քան մինչև այդ ժամանակ յայտնի էին: Հողային բացիլների վրա փորձեր սկսվել են և Ռուսաստանի զանազան կողմերում: Երկու տարի առաջ փորձեր սկսվեցին և այնպիսի մի հեռաւոր տեղում, ինչպէս է Անդրկասպեան երկիրը: Ինչ վերաբերում է Անդրկովկասին, այստեղ դեռ փորձեր չեն եղել: Իսկ խնդիրը արդէն ուշադրութիւն է գրաւել և հաւանական է, որ առաջիկայում նոյն փորձը տեղի ունենայ և Անդրկովկասում:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Յունիսի 16-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ	.	94	ռ. 40 կ.
Բերլինի վրա 100 մարկ	.	45	„ 27½„
Պարիզի վրա 100 ֆրանկ	.	37	„ 37½„
Պօլուխպիրեալ	.	—	„ — „
Մաքսային կուպօնները	.	149	„ — „
Բօրսային դիսկօնտ	.	5	„ 6½„
4% պետական ըվնտա	.	101⅝	„ — „
4% Ներքին փոխառութեան	.	100½	„ — „
4½% դրաւ. Թղթ. ազն. կալ. բանկի		—	„ — „
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի	.	100⅜	„ — „
Ներքին 5% առաջին փոխառութ.	.	286½	„ — „
Նոյնը „ երկրորդ —	.	247	„ — „
5% դրաւ. Թղթ. ազն. կալ. բանկի.		216½	„ — „
5% պետական երկաթուղ. ըվնտա	.	—	„ — „
Պետերբ. քաղ. կր. ընկ. օբլ. 5%	.	100⅝	„ — „
Մօսկվայի քաղաք. կր. օբլիգացիաներ.		101¾	„ — „

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՕՋՕՐՈՒՄ

վարձով է տրվում ԱՄԱՌԱՆՈՑ, վերին յարկ, 6 սենեակ, կահկարասիքով և ամեն յարմարութիւններով, ընդարձակ պարտէզի մէջ: Դիմել Ռօստոմ Մարտիրոսեանին, Մադաթեան փողոց, սեփական տունն: 1—3

Կենտրոնական և Կովկասեան գրավաճառանոցներում վաճառվում են «ՆՈՒԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ» խորագրով հետեւեալ գրքերը:

ԱՆՏԱՌԱՊԱՀԸ, Սմիրնովա, գինն է . 12 կ.
ԱՇԽԷՆՆ ՈՒ ՄԱՐԳԱՐԻՏԸ, Ռօգօվա . 10 »
ԱՂԲԱՏԻ ԲԱԽՏԸ, Անդրէեվա . . . 5 »
ԳՈՀԱՐԻԿՆ ՈՒ ԱՍՏՂԻԿԸ, Աննենսկայա. 10 »
ՆԵԼԼՕՆ ԵՒ ՊԱՏՐԱՂԸ, ՈՒԻԴԱՑ . . 10 »
ԳԻԻՂՈՒՄ, Երգօլսկայա . . . . 20 »
3—6

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
ԿԻՆ ԲԺԻՇԿ Ա. Ի. ՐՈՒԴԵՆԿՕ—10½—11½ ժ.: կանանց և երեխայոց հ., ծաղկի պատուաստումն:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11½—12 ժ. կանանց հիւանդ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—1½—2½ ժ. ներքին, և միզասեռական հ. ականջի, կոկորդի և քթի հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՁԷ—6—7 ժ. ներքին և երեխայոց հ. նեարդային և մորթի հ.
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6½—7 ժ.
Տ. Ի. ՐՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խիւ, արեան, կաթի և այլն:

Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին: Հիւանդանոցի վերատեսուչ՝
133—150 Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԲԺՇԿԱՊԵՏ ԲԵՐԲԵՐԵԱՆ

Պետերբուրգի բժշկական ակադեմիայի ներքին հիւանդութեան կլինիկայի օգնականը

Ընդունում է առաւօտ, ներքին հիւանդութիւն ունեցողներին ԷՍՍԷՆՏՈՒԿՈՒՄ և ԿԻՍԼՕՎՕԴՍԿՈՒՄ: 3—3

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Մինիստրների կոմիտէի օրագրով, որ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՑՍԸ ԲԱՐՁՐԱԳՈՑՆ հաստատել է 26-ին մարտի 1898 թվ., սահմանած է.

I. Թոյլ տալ վերադառնալ Կովկասի սահմանից Թիւրքիա, առանց մաքսատան կարգերը պահպանելու, միմիայն տեղական ոստիկանութեան մեծաւորների վկայականով, այն Թիւրքահպատակ հայ գաղթականներին, որոնք ցանկութիւն կը յայտնեն օգտվել այս Թոյլտուութեամբ:

II. Իրաւունք տալ կովկասեան քաղաքացիական մասի Կառավարչապետին. ա) մի տարվայ միջոցում, սկսած այս ԲԱՐՁՐԱԳՈՑՆ բարեհաճութեան օրից, վերադարձնել իր իշխանութեան տակ գտնվող երկրի սահմանից բոլոր Թիւրքահպատակ հայ գաղթականներին, որոնք չեն յայտնի ցանկութիւն օգտվել մինիստրների կոմիտէի այս կարգադրութեան առաջին յօդւածում յիշված Թոյլտուութեամբ, տալով կարօտեալներին, իր հայեցողութեամբ, ճանապարհի նպաստ, նրանց համար ժողոված նուէրներից. և բ) անյապաղ յայտնել այս մասին ընդհանուր տեղեկութեան համար:

Այս ԲԱՐՁՐԱԳՈՑՆ հրամանը յայտնվում է ընդհանուր տեղեկութեան համար Թիֆլիսի նահանգում:

Իսկականը ստորագրել է.
Թիֆլիսի նահանգապետ Ֆ. Բլկով
Վաւերացրել է՝
Կառավարիչ դիւանատան՝ Դ. Տիրիւտին
Ուղղ է՝
Կառավարչէ դիւանատան Դ. Տիրիւտին
Համեմատեց՝
Աւագ օգնական Մելիքայլով:
4—5

1—11 (սահ. 20)

ԵՐԴՈՒԵԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ
Սամսօն Ստեփանեան
ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԴԱՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ
ԲԱԳՈՒ. հիւրանոց «Գրան-Օտէլ»
(Հ. չ. Ա.) 6—10

Լոյս տեսաւ
ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ
ՀԵՆՐԻԿ ՍԵՆԿԵՎԻՉԻ
ՅՈ ԵՐԹԱՍ
(QUO VADIS)
Վէպ, Ներոնի ժամանակից: Լեհերէնից թարգմ.
ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆՑ:
(742 մեծադիր երես)
ԳԻՆԸ 1 ՐՈՒԲԼԻ 50 ԿՕՊ.
Դիմել՝ ТИФЛИСЪ, Армянское Издательское Общество. (չ.) 11—20

Թիֆլիսից հեռանալու պատճառով բոլոր գրքերս վաճառում եմ պակաս գներով: Գրավաճառները և մասնաւոր անձինք պայմանների մասին կարող են դիմել ինձ մինչև ամսիս վերջը: Հասցէ՝ Въ Тифлисъ, Депо лампъ Е. Цатурова. Քամալեանց Ս.
(Հ. չ.) 2—2

ԱՄԵՆԱՑԱՑՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



ՐՕՑԵԱԼՆԵՐ



ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

ՖԻՍ-ՀԱՐՄՕՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ, ԿԻԹԱՌՆԵՐ, ՖԼԷՅՏՆԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՁԱՅՆԱԽԱՁԵՐ, ԼԱՐԵՐ, ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ:



Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս-մաս:
ՆՈՐ-ՊՐԷՅՍԿՈՒՐԱՆՏՆ
ուղարկվում է ձրի:
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՁԱՅՆԱԽԱՁԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ-ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ
ԴԷՊՕ
Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ
Մատակարար Կայսերական Երաժշտական Ընկերութեան
Музыкалное депо Б. М. Мириманіана, ТИФЛИСЪ.
Дворцовая ул., д. Т. Д. З. Банка.
18—20

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԷԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՑԻՆ ԿՕՆՍԻՍՏՕՐԻԱՑԻ ատենի մէջ նշանակված է Աշնուրդ 24-ին սոյն յունիսի, առանց կրկնաձրդի, կապալով տալու էջմիածնի տունը իր խանութներով, որ գտնվում է Պուշկինեան փողոցի վրա: Աշնուրդին մասնակցողները պէտք է ներկայացնեն գրաւական. իսկ պայմանների մասին կարող են տեղեկանալ կոնսիստորիայի դիւանատանը:
2—3 Անդամ կոնսիստորիայի՝ Թադէոս վարդապետ

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ
ԼԷՕ
ՄԷԼԻՔԻ ԱՂՋԻԿԸ
(Պատմական վէպ 753 երես):

Գինը 1 ռուբլի 30 կոպէկ: Դիմել հեղինակին. ТИФЛИСЪ, редакція „Мшакъ“.

Թիֆլիսում ծախվում է և կենտրոնական գրավաճառանոցում: 9—10

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
ՏԱՍՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատեստատներ:

Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիդօնովի տանը, № 9, Սերգիեվսկայա և Նագօրնայա փողոցների անկիւնում: Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս եղբ. Ծովիանօվների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу. (չ. չ.) 3—25

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԵԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 24 յունիսի (6 յուլիսի) ՍԻՐԿԱՍԻ շոգենաւը, նաւապետ ԳԱՐՐԻԿ: Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով:

Ապրանքների և ճանապարհորդների մասին տարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Ադմօնի, Նաբէրէժնայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիմոնի փող. նախկին Ադրամտու քարվանսարա: ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիլղարեանին, Կօլիւբակինսկայա հրապարակ: ՆՕՎՈՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելխիսը Հերշենզօնին: (Ա. Հ. չ.) 3—20

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
Հեղինակ «Զեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան»
ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ Է ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց, 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա) Կրկնակի խոտական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուեհատութեան:
Բ) Առևտրական թուաբանութիւն:
Գ) Առևտրական նամակագրութիւն:
Դ) Գեղագրութիւն և ամենավատ ձեռքերի ուղղութիւն:

Պարապմունքները սկսվելու են սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՁՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ:

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 5 ժամ երեկոյեան,
ՍՕԼՕԼԱԿ, Սերգիեվսկայա փողոց, տուն Լիսիցեանի, № 20:

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, Խիդէկելի գրավաճառանոցում և հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում: ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ: Օտարաքաղաքացիները գիրքը գտնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու: (չ.) 6—15

Նոր ստացվել են արտասահմանից
ԿԱՆԱՉԱԳՈՅՆ ԵՒ ԽՕՍՈՒՆ ԹՈՒԹԱԿՆԵՐ

և զանազան օտարերկրեայ թռչուններ: Նոյն տեղում ցանկանում եմ գնել Կովկասեան կենդանի վայրենի անասուններ, օրինակ եղջերու, պասրի, ջէյրաններ, վայրի խոզեր և այծեր և զանազան տեսակ թռչուններ:

Պէտք է դիմել հետևեալ հասցէով Միքայէլեան փողոց № 106, Բարամովի տուն:

Գուգօ Վինկլեր
(ա. հ. հ.) 3—12

Дозволено цензурою, Тифлисъ, 19 Іюня 1898 г.
Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13